



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎՐԵԺԻ ՈԳԻՆ

ՀԱՅ ՆԱՄՈՒՍԸ

ԲՈՒՆԱՊԵՏԻՆ ՎԱԽԱՉԱԾ

ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԴՐԵՑ

Գ.ԲԻԳՈՐ Գ. ԴՈՒՏՈՒԼԵԱՆ (ԳԵՐՈՒՅԻ)



Կ. ՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵԳԱՆԵԱՆ

1921

891.99
9-98

891.99
9-98

01 JAN 2009
18 NOV 2011

ՎՐԵԺԻ ՈԳԻՆ

ՀԱՅ ՆԱՄՈՒՍԸ

ԲՈՆԱՊԵՏԻՆ ՎԱԽՃԱՆԸ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ՝

ԳՐԻԳՈՐ Գ. ԳՈՒՏՈՒԼԵԱՆ (Գեղունի)

~~~~~@~~~~~

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱԼԵԳՃԵԱՆ

1921

27 MAR 2013

26.816

ՅԱՀԱԳԻՆ ԶՕՆ

1909 ին Ատանա մորքուած  
եւ Սիհուն գետ նետուած պատելի  
ելքորս Մովսէսին .—1915 ին Մարտ  
կախաղան բարձրացած Հօրեղօրորդուոյս  
Մանուկին եւ Skr - ել - Զօր խաչի  
ճամբուն վրայ մորքուած սիրելի  
երջու Մարիամին եւ չորս  
գաւակներուն

ԳՐԻԳՈՐ Գ. ԳՈՒՏԱԿԻԵԱՆ



63473-67

## ԱՆՁԻՆՔ

ՄԻՀՐԱՆ.— Ամերիկային Եկած զինուոր.

ՎԱՐԴԱՆ.— Սահմանապահ զինուոր.

ՄՈՒՇԵՂ.— Վարդանի հայրենակից զինուոր.

ՎԱՐԴԻՆԵԼ.— Միհրանին բոյր, սարուած քուրենէ.

ՎԱՀԱԳԻՆ.— Վարդինելին նշանածը.

ԿՅՐՈ.— 70 տարեկան Միհրանին հայրը

ՄԷՍՈՒՏ Պէջ.— հարիւրաւոր աղջիկներ պղծող  
քուրք մը.

ՀԱՅ ԿԱՄԱԿՈՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ:

Տեսարանը բացուելուն Միհրան ճեռքը նամակ  
մ'առած կը կարգայ եւ խորհուրդներու մէջ խորասուզուած  
ու դէմքին մէկ կողմը ճեռքին մէջ առած կը մենափոսէ,

## ՏԵՍԻԼ Ա.

ՄԻՀՐԱՆ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՄԻՀՐԱՆ.— Առ քեզի գումկան նամակ մըն  
ալ. կեանքը չատ տաղտկալի և անտանելի դար-  
ձաւ ինձ համար, երանի թէ Հայրենիք մնացած  
ըլլազի և արիւնս գոնէ խառնուէր սիրելիներուս  
արիւնին հետ: Աւազ զ, բոլոր իղձերս, յոյսերս  
և երազներս ողը ցնդեցան... սակայն ինչ  
կ'ըսեմ, պէտք չէ յօւսահատիլ. (ոսի կ'ելլի  
եւ պստելով) Ամերիկայի խաղաղ և հանգիստ  
կեանքը լքեցի և, ո'վ Հայրենիք, քեզ համար  
մեռնիլ ուխտեցի, յետ այսորիկ օտար աստղերու  
տակ մնալը մահ է ինձ համար. պէտք է,  
այս', պէտք է շուտով մեկնիմ և լուծեմ դժբախտ  
ազգիս վրէմը. ո՞վ գիտէ, այսօր որքա՞ն հա-  
յեր կը տառապին ու չարաչար կ'ապաննուին:

Ո՞ւր մնաց արդեօք խեղճ հայրս ու մամս .  
անիծեալ պատերազմ՝ ըսէ՛ ինձ , անյագաբար  
կլլեցի՛ր արդեօք իմ ալ ջիւաններս . . . Աստուած  
իմ , Դանկիս մէջ փոթորիկ մը պայթեցաւ . Համ-  
բերութիւնս հատաւ , (աչերը չորս կողմ սեւե-  
ռած) նայեցի՛ք սա սպաննուածներու սար-  
սափելի տեսարանները , մեր պաշտելիները մէկիկ  
մէկիկ կուգան ու կանցնին առջեւէս ու չեն ձգեր  
զիս որ քնանամ , ոգինե՛ր . . . ուրուականնե՛ր . . .  
թողուցէ՛ք որ քնանամ . . . խելագարեցայ՝  
արդեօք , չէ մի որ բան մըն ալ չ'կայ , կ'երեւի  
խիղճս է որ կը տանջէ զիս նոնիրական պար-  
տականութեան գլուխ չի գտնուելուս համար .  
այսօ՛ր իսկ պէ՛տք է անպատճառ մեկնիմ :  
Ծերունի խեղճ հայրս արդեօք որքա՛ն կարօտով  
կ'սպասէ ինձ . Եթէ չ'երթամ , կ'անիծէ զիս , ամ-  
բողջ տասը տարի է որ զինք տեսած չ'ունիմ :

ՎԱՐԴԱՆ .— Ո՞վ ես , ուսկի՞ց կուգաս և ու՞ր  
կ'երթաս :

ՄԻՀՐԱՆ .— Հայ եմ , Ամերիկայէն կուգաս  
և Հայաստան կ'երթամ զինուոր գրուելու և  
սիրելիներս գտնելու , թո՛ղ զիս և շարունակեմ  
ճամփաս :

ՎԱՐԴԱՆ .— Պէտք է հո՞ս մնաս և հոս զինուոր  
արձանագրուիս որ միասին պատւոյ դաշտ մեկ-  
նինք և մեր դժբախտ ազգին վրէժը լուծենք :

ՄԻՀՐԱՆ .— Միասին երթանք զօրանոց-  
սիրով կ'արձանագրուիմ , չէ՞ մի որ այդ նպա-  
տակին համար Ամերիկայէն մինչեւ հոս երկար  
ճամփորդութիւն մ'ըրի և մայր հող ոտք դրի-  
բնկեր , խնդրեմ չո՛ւտ երթանք , անիծեալ  
մարդահրէշը բարբարոսութեան գլուխ զործոցը  
արձանագրեց պատմութեան մէջ : Զի ձանձրա-  
ցաւ խմել հայու արիւն և կրծել հայու ոսկոր .  
շշիարհ արարատ կոյր հանդիսատեսը եղաւ հայ-  
կական անվերջանալի զուլումներուն . վերէն  
Աստուած վարէն անխիղճ քաղաքականութիւնը  
լոեց . ամօ՛թ , հազա՛ր ամօթ քաղաքակրթու-  
թեան . . . գիւղեր կ'այրին . . . աղջիկներ կը լըլ-  
կուին . . . մարդիկ գառնուկներու պէս կը մոր-  
թուին , հարիւր հազարաւորներ կտոր մը չոր հացի  
կարօտէն կմախացած կ'անշնչանան և տակաւին  
այս վիճակին մէջ կը ներուի տէրութեան մը որ  
իրաւունք չ'ունի երթէ՛ք ապրելու :

### ՏԵՍԻԼ Բ.

ՄԵՀՐԱՆ ՅԵՒ ՄՈՒՇԵԳ .

ՄԻՀՐԱՆ .— Անպատճառ եկող մը կայ . ո՞վ  
էք , հրամմեցէք :

ՄՈՒՇԵԳ .— Բարե՛ւ , երէկ Մշեցի Գուրգէնէն  
լսեցի որ հոս եկեր և զինուոր արձանագրուեր  
էք . շիտակը շատ ուրախացայ . եթէ մթնշաղ  
չ'ըլլար անպատճառ զձեզ կը գտնէի :

**ՄԻՀՐԱՆ.** — Հո՛գ չէ, ուրախ եմ որ այսօր քովս հայրենակից զինուոր մ'ունիմ, շատ մօտ ենք թշնամին. այս իրիկուն սպաս ինձ կ'ըսէր թէ մեր գեղի բոլոր էրիկ մարդիկ 15—75 տարեկան դէմուռութունուն և պատերազմ դաշտ են մեկներ, անկասկած խեղճ հայրս ալ կոռուզներուն մէջն է, այսօր, այս՝, այսօր, անպատճառ լուր մը պէտք է առնեմ, հիմակ մարափրոսացածները կը բերուին: (պատգարակի վրայ դրուած սպանեաւած զինուոր մը կը բերեն):

**ՄՈՒՇԵԴ.** — (ապահնուած զինուորին երեսը կը բանայ ու լաւ մը կը նայի), Հայաստան չի մեռնիր երբէ՛ք, քանի ասանկ ծերունիներ ունի, 70 տարեկան այս խեղճ ծերունին տուն տեղ սիրելիներ լքած պատերազմի դաշտ մեկնած ու առաջին շարքի առաջին խրամի մէջ դիրք բռնած էր. քանից տեսայ և զդուշացուցի զինք որ վըտանգաւոր դիրքի մը մէջ կը գտնուի. սակայն յամառեցաւ ու մտիկ չ'ըրաւ, պատկառելի և վեհանձն ծերունի... խեղճ տղան հոս է, ի՞նչ պիտի ըսենք իրեն... դժբա՛խտ տղայ... գուշակութիւնները իրականացան:

**ՄԻՀՐԱՆ.** — (կ'աճապարէ, կուգայ եւ դիակը կը դիտ ու կ'սկսի դողալ) Տէ՛ր Աստուած, հա՞յրս է, երա՞զ, ցնո՞րք թէ իրականութիւն, ուրուականներ, հանգիստ ձգեցէք զիս... ինչո՞ւ կը հալածէք... ինչ ըրի ձեզի... թշուա՛ռ հայր, ի՞նչ

հայրենասիրական վեհ զգացում և մեծ ոգի, հայրենիքի սէրը որդուոցդ կոտակելէ վերջ դուն ինքդ այսօր ողջակէզը եղար անոր: Բայց ի՞նչ կ'ըսէմ, ցնորեցայ արգեօք, մօտենամ մէյ մը և լաւ մը նայիմ սա դիակին: (կը մօտենա) Աստուած իմ, հայրս, խեղճ հայրս է, սրտին վրայ սուրինի հարուած մ'ունի, անգութիւն թշնամին սպաննելէ վերջ խեղճ հայրս ժանգուած դանակով բզիկ բզիկ անձանաշելի բրած է դժբախտ հօրս դիմագիծը. վա՛տ, հրէ՛շ, այսօր արել մարը չի մտած, պիտի լուծեմ հօրս վրէժը (ծունկ կուգայ) Ո՛վ հայր, կ'երգնում, Աստուծոյ, դիակիդ, պատոյս և սուրիս վրայ. եթէ մինչև արել մարը մտած քու վրէժը չի լուծեմ, գերեզմանէդ անիծէ զիս, միաս բարով, անուշիկ հայր, կը խոնարհիմ պաշտելի դիակիդ առջեւ. քնացի՛ր հանգիստ, այսօ՛ր իսկ սուրս պիտի ներկեմ ազիւնով և շատեր պիտի՝ խոնարհին իմ՝ առջեւ. ո՛վ հայր, հանգիստ ուկորներուդ:

### ՏԵՍԻԼ Գ.

ՎԱՐԴԻՆԵ ԵՒ ՄԵՍՈՒՏ ՊէՅ

**ՎՈՐԴԻՆԵ.** — (ձախ ձեռքը երեսին կոքնեցած, կը խորհի շարունակ, կը հեծկլայ եւ կը մենախօսէ Մեսուտ պեյի սենեակին մեջ) Պի՛զծ արարած, իր ստոր կիրքերուն յագուրդ տալու համար մայրական անուշ սիրոյ բոյնէն խլեց զիս

ու հոս նետեց : Ախ , նամուսո ու՞ր պիտի մնայ և  
ի՞նչ պիտի ընէ ռաշտելի Վահագս սա անցաւոր  
աշխարհի վրայ առանց ինծի : Զէ , վճռած եմ ,  
չ'պի՛տի թողում որ բռնաբարուի պատիւս . հո՛գ  
չէ , թող գայ անամօթը և եթէ ուզէ թող  
սպաննէ զիս . որոշումս կարուկ և վերջնական  
է : Ո՞ւր ես Աստուած իմ , ալ հերի՛ք ննջես .  
չի ձանձրացա՞ր , բա՛ց աչերդ և ականջներդ և տե՛ս  
վարը գործուած սարսափելի տռամները , լսէ՛ ա-  
զիողորմ ձիչերն ու հեկեկանքները որոնք քեդ  
կ'ուղղուին , մի՛ թողուր որ սրբալղծուին տա-  
ճարներդ և անարգուին սուրբերդ :

**ՄէՍՈՒՏ ՊէՅ.**— (բարկացոս դէմքով ներս կը  
մտնէ) տակաւին կը շարունակե՞ս խօսիլ քեա՞-  
ֆիրի լակոտ , տե՛ս սա արիւնաներկ սուրը (պա-  
տեն կախուած սուրը կը ցուցնէ) իւրաքանչիւր  
կաթիւի մէջ մէկ խւնզըր քեափիր էրմէնիի հոգին  
կայ , քեզի պէս քանիներ քմահաճոյփիս զո-  
հեցի և բարեկամներուս ալ նուէր զրկեցի , հո՛գ  
չէ , վերջին յիմար փորձ մըն ալ դո՛ւն ըրէ , չե՞ս  
գիտեր թէ աշխարհ կը սարսափի նոյն իսկ նայ-  
ուածքէս , անսւնս լսողը կը սարսափի . Մէ՛սուտ  
պէյ , ա՛յս է անսւնս , միտքդ լա՛ւ պահէ , սուքիս  
տակ են քու երազած բոլոր փառքերդ , սև սատա-  
նին յանձնէ սև խորհուրդներդ և եկո՛ւր հանգչի՛ք  
քաջի մը գրկին մէջ ու վայելէ աշխարհի բոլոր  
փառքերը : Հիմակ ինքզինքդ երջանիկ կ'զգաւ

Վարդինէ այնպէս չէ՞ . եկո՛ւր ուրեմն քովս նստէ  
(ձեռնէն կը բաւէ):

**ՎԱՐԴԻՆԻՆԷ.**— (ես ես խօսւելով եւ բարկա-  
նալով) Մ՛ի դաշիր ինձ , եթէ յիրաւի քաջ ես ,  
քաջը չի՛ սիրեր ո՛չ ստորնութիւն ընել և ո՛չ  
ալ անզօրը նեղել . աէր Աստուած , ի՞նչ կ'ըլ-  
լամ . . . անգո՞ւթ մարդ , վաղը ի՞նչ պատասխան  
պիտի տաս սիրելի Վահագիս . եթէ խլես ինձմէ  
պատիւս , նս ալ կը խլէ քեզմէ կեանքդ : Սիժա-  
փէ՛ , խորհէ՛ և ըստ այնմ շարժէ ու հեռացիր  
ինձմէ , ազատ թող տուր զիս և սա՛նձէ կիրքերդ :

**ՄէՍՈՒՏ ՊէՅ.**— (քրջալիր) Յիմար խօսքերդ  
լսեցի աղջիկ , զարմանալի մտայնութիւն , Վա-  
հագն պիտի գայ և սպաննէ եղեր զիս . քա՞ն ,  
քա՞ն , քա՞ն , ատանկ փոքրողիները սուրիս խո-  
նարհիլ և զի՞ս պաշտել գիտեն միայն 0՞ն ուրեմն ,  
ըսէ՛ ինձ , կը սիրե՞ս զիս . եթէ ոչ , սա սուրը  
երկու կտոր պիտի ընէ զքեզ :

**ՎԱՐԴԻՆԻՆԷ.**— Մէկ պայմանով կընամ սիրել  
զքեզ . ես Քրիստոնեայ եմ , մանկութենէս սիրած  
եմ եկեղեցիս և յարգած անոր բոլոր ծէսերը ,  
կանչել կուտաս քահանայ մը , կը խոստովանիմ  
բոլոր մեղքերս , թողութիւն կ'առնեմ և ապա  
նիկեան կ'ըլլամ հետդ . առանց ասոր չեմ կընար  
մօտենալ զքեզ : Մի քիչ առանձինն և ազատ ձգէ  
զիս որ նամակ գրեմ քահանայի մը և ինդիրը  
վերջանայ , ազատուիմ :

**ՄԵՍՈՒՏԾ ՊէՅ.** — Սա չքեզ պալատը ով ձգել և մեկնի կը փափաքի, խեղճ աղջիկ, ինքզինք օտարութեան մէջ զգալուն, սրաի ցաւէն բաներ մը խօսեցաւ և վերջապէս ամէն կողմէ յուսահատած համակերպեցաւ: (Վարդինիին դառնալով) Սիրելի՛ս. մի քիշ ակամայ կը բաժնուիմ քեզմէ և կ'առանձնանամ գրասենեակս. բերել տուր ուղած կղերդ:

**ՎԱՐԴԻՆԵԼ.** — [մեկուսի] Նամակ մը դրեմ վահանիս, թող քահանայի մը տարագին տակ ինքը հոս գայ և սպաննէ սա կատղած շունը, աղատումի ուրիշ ճար չի մնաց: (կ'սկսի գրել եւ մէկ մը կարգալ): Սիրելի վահագս, այսօր ութ օր է ո՛չ կերած և ո՛չ ալ խմած, արիւնար բու անգութ գաղանի մը սենեակը արգելափակուած կը մնամ, նա կ'ուզէ բոնի սպատիւս խլել ինձմէ, քու սիրոյդ վճռած եմ ձաշակել դառն մա՞ր և չի յանձնուիլ գարշելի ճիւղին. սիրելի՛ս, ակնապիշ կ'սպասեմ քեղի, եթէ ուշ շանաս, լա՞ւ, գիտնաս մեռած է Վարդինէդ, այժմ մնաս բարով պաշտելիս, եթէ ուշանաս երկինք կը տեսնուինք:

**ՄԵՍՈՒՏԾ ՊէՅ.** — Ի՞նչ խորհեցար սիրելի վարդինէս... կէլ քէյֆիմ կէլ, ասանկ իւզոտ պատառ որո՞ւ ձեռք կ'իյնայ, զրած նամակդ հիմակ կը դրկեմ և անունս լսող քահանան թոչելով հոս կ'իյնայ:

### ՏԵՍԻԼ Պ.

**ՎԱՀԱԳՆ.** — Մէսուտէս ՊէՅ եւ ՎԱՐԴԻՆԷ  
ՎԱՀԱԳՆ. — (Քահանայի տարագով ներս կը մտնի) Պէտք է յարդենք օրէնքը, Ով մեծդ, հզօ՛ր իշխան, մի քիշ կ'առանձնանաք դուք և ես կը խոստովանցնեմ այս աղջիկը և ապա կը կատարեմ ձեր սուրբ պատկի խորհուրդը:

**ՄԵՍՈՒՏԾ ՊէՅ.** — Սմբանայն սիրով, ազատ էք տեսնուիլ Վարդինէիս հետ, կատարեցէք բոլոր ձեւակերպութիւնները և հաշիւ մը ներկայացուցէք ինձ թէ հարսանիքի համար ի՞նչ գումար պէտք է, որ անմիջապէս տամ ձեզի և տոօք վառօք ճամբու գնեմ:

**ՎԱՀԱԳՆ.** — (կամացուկ մը քահանայի տարագը վայ կ'առնեն եւ չորս կողմբ լաւ մը դիմելի վիերջ յուգուած ձայնով մը կը բացազանչէ) Վարդինէ...

**ՎԱՐԴԻՆԵԼ.** — (Զեռերը բացած դեպի Վահագն կը լվագէ եւ արցունեով ու պաղատագին Վահագին ոսերը կը փարի) Վահագս, Վահագս (կը գրկուին):

**ՎԱՀԱԳՆ.** — Տարբեր միջոց չ'կայ ամէնէն կտրուկ ձամբան պէտք է սպաննել կամ սպաննուիլ. թքա՛ծ եմ այս կեանքին վրայ, մէ՛կ չէ, երկուք չէ, արդեօք որքան ասանկ ծաղկատի օրիորդներ հարէմներու մէջ կը խաչուին օրն ի բուն և աղատարար բանակներու յառած են իրենց մեջու աչերը (կը տիրի եւ կ'սկսի սուրբ խառնել):

ՎԱՐԴԻՆԵԼ. — (դողալը եւ պաղատելով) Սիրելի Վահագ, ազատէ զիս այս ճիւաղին սուր ճանկերէն :

ՄԵՍՈՒՏ ՊէՅ. — (Խոժոռ նայուած մուղիելով Վահագին) Ի՞նչ յանդգնութիւն, յիմա՛ր տղայ, որ մինչև հոս կուգաս և կը փորձես ինձմէ խլել պաշտելիս, այս սուրով երկու կտոր պիտի ընեմ քերդ որ գիտնաս և այս յիմար ալջիկն ալ համոզուի թէ ես ո՞վ եմ (Մէսուտ պէյ եւ Վահագն կ'սկսին կատաղի կերպով սուրով կուոիլ, Վահագն լանջօնեն ծանր կերպով կը վիրաւորուի եւ անմիջապէս կը մեռնի եւ իր ոստիի կողմէն գետնախաւու դուրս կը նետուի) Հիմա՛կ գիտցա՞ր թէ ես ո՞վ եմ բոլո՛ր անոնք, որոնք կը փորձեն հետո խաղալ, անոր բախտին կ'ենթարկուին :

Հիմակ լաւ գիտցիր թէ յուսոյ ամէն դռները վերջնականապէս գոցեցի և քեզ սիրել ուխտեցի : Ո՞վ Վարդինէ, այսօր գեղեցիկ հանդէս մընենք, հոս կանչենք նաև ծնողքդ, լաւ խնջոյք մընելէ վերջ նիկեան ըլլանք վէսսէլամ : Ահա կը պատրաստեմ աղւոր սեղան մը և սեղանին վրայ երկու չիշ գինի կը զնեմ տարրեր խիցերով, դեղին խիցը կրող շիշի գինիէն ես և դու, ճերմակէն ալ ծնողքդ թող խմն (ներմակ օհեին մեջ գալուուկ մը բոյն կը լեցնէ, Վարդինէ յոււակորոյս կը խորհի) Ցոյսի մէկ կանթեղը մարեցի, քչիկ մը թոյն խառնեմ սա գինին մէջ և սատկեցնեմ

միւս քերա՛ֆիրներն ալ, ասանկով յաջողած կ'ըլլամ կ'սկսի տրշ ագալի, Վարդինէ առիթէն օգտուելով ոսքի կ'լիէ եւ կը յաջողի փոխել օհեւրու տեղը եւ վրայի խիցերը):

Տէ՛ր Աստուած, ի՞նչ երջանկութիւն, ահա բոլոր աղգականներս կուգան, միասին կուտենք, խմենք և զուարձանանք, աշխարհ՝ ասանկ է, հածոյքէն զատ սուտ է ամէն ինչ : (Վարդինէի ազգականները ներս կուգան) հրամմե՛ցէք, նստեցէք, բարի եկաք, Վարդինէ որքա՞ն ուրախ եմ այսօր այժմ կը վայելեմ սիրելի աղգականներուս ներկայութիւնը, այժմ քեզ կը մնայ աւելի պատուել ծնողքդ, ուրեմն ե՛լ լիցո՞ւր մէյ մէկ գինի, խմենք անուշներ լինի . (Վարդինէ գաւաքները կը լեցնէ եւ կը բացնէ) ես, այս գաւաթը կը պարպեմ սիրելի աղգականներուս կինացը :

ՎԱՐԴԻՆԵԼ. — Ես ալ այս գաւաթը կը պարպեմ ցմրուր հայ կնոջ պատիւը բարձր պահելու համար : (Քունաւորուած կսկսի դողդդալ եւ կ'անենչանայ):

ՄԵՍՈՒՏ ՊէՅ. — (կ'սկսի դողդդալ) Անիծեա՛ւ աղջիկ, թունաւորեց զիս . հասէք, օգնութեա՞ն հասէք, ո՞ւր է Տօքթօր Ռիզան, ա՛խ որքա՞ն կը սիրէր զիս, ճիշտ իմ բնաւորութիւնս ունեցող հայատեաց մէկն էր . (Տօքթ. Ռիզա ներս կը մնէ եւ անմիջապէս դեղքափ կուտայ Մէսուտ պէյին: Զուր կը սրսկի աշխերուն եւ երեսին որ կամաց կամաց կ'սրափի) Տօքթօրս, կեանքս քեզ կը պար-

տիմ, հո'զ ճանկես ոսկի դառնա . եթէ չի համնելիր  
և վայրկեան մալ ուշանայիր, անկառած կ'ան-  
չնչանայի : (Կելլե կը նստի եւ կ'սկսի խօսիլ) ի՞նչ  
եղայ, ի՞նչ դաւագրութիւն, լաւ որ սատկեցաւ  
ոս յիմար աղջիկը . թոյնը փոխանուկ ծնողաց  
խմցնելու ինք պարպեց և ինձ ալ հրամցուց .  
ազգը, նշանածը, զինքը, ծնողքը և սննդիւ քեա-  
ֆիրներ սատկեցոցի, և տակաւին չի կշտացայ:  
Ա՛խ, ի՞նչ է այս : (Մեսուս պել կը մոլեզնի)  
Սաթինէ, վահա՞գն եւ . . . կեցէ՛ք . . . ե՛ս, ե՛ս չէի  
ըսէ՛ ով ես զուն, ինչո՞ւ լուռ ու մունջ կը հե-  
տապնդես զիս, կեցի՛ր մեղքա քաւեմ, (սարսա-  
փահար կ'սկսի փախչիլ, սուինաւոր խումբ մ  
հայ զգինուորներ կը նետապնդեն բռնակալը, կ  
գտնեն եւ միաձայն կը զոչեն) :

ՀԱՅ ԿԱՄՈՒԽՈՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԲՔԸ .— Գտա՛ն  
զքեզ, վերջապէս գտանք, անիծեա՛լ շուն, ու՞ր կ  
փախչիս այժմ դէպի տուն, մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք  
հայ զինուորները գիտեն ասանկ ջախջախել իրեն  
անխիլձ բռնակալներուն գանկերը : Ո՞վ Հայաս-  
տան, այժմ լուծուած է վրէժգ, թո'զ խայտան մե-  
պաշտելի նահատակները, բռնաւորին անարդ լուծ  
խորտակուեցաւ, Հայաստան ու Հայ նամու-  
փրկուեցաւ :



Հայաստանի Ազգային գրադարան



NL0438315

26.816

## Հ Ե Պ Ի Ն Ա Կ Ի Ն Գ Ր Ծ Ե Ր Ը

- 1.— Կիլիկեան Այբենարան
- 2.— Պատմական Խորագիւությունը
- 3.— «Հայ Լեռ» պ կարմիր դրուազներ Կիլիկի  
Աղետ
- 4.— Կարմիր Յօրեր Տարագրի կեանցին
- 5.— Տրամախօսութիւն. — Վրեմի ոգին, Հայ Նամուն  
Բոնապետին մա
- 6.— Ամանոսի անկախութիւնը եւ Կիլիկիոյ վեց  
դեպքերը (Անար)

Գրք 10 Ղրութ